ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2015 թվականի N 177-Ա

ԿԱՐԵՆ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻՆ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով, **ո ր ո շ ու մ ե մ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 68-2.3-29/ Կարեն Փարսադանյանին շնորհել իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2. Կ.Փարսադանյանի հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանել 5 տոկոս հավելավճար:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ. հունվարի 1-ից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ. դեկտեմբերի 24
ք. Կապան